



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ**  
**ՄԱՐԶՊԵՏ**

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. /374281/ 2 25 22

« 05 » հունիս 2023թ.

N 01/15/3908-2023

**ԱՆԿԱԽ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ**  
**ՎԱՀԵ ՕՀԱՆՅԱՆԻՆ**  
**ԹԵՀՄԻՆԵ ԵՆՈՔՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Օհանյան, տիկին Ենոքյան**

Ի պատասխան 2023 թվականի մայիսի 19-ի Ձեր հարցման (մուտքի ամսաթիվ՝ 29.05.2023թ.) ներկայացնում ենք մեր կողմից տնօրինվող և հրապարակման ենթակա տեղեկատվությունն ըստ կետերի.

1. 2020 թվականի պատերազմից հետո ՀՀ Վայոց ձորի մարզի սահմանամերձ դարձած Եղեգիս համայնքում /ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված սահմանամերձ բնակավայրերի ցանկում ներառված չէ/ սուբվենցիոն ծրագրերով խմելու և ոռոգման ջրի համակարգի արդիականացման համար ծախսվել է մոտ 439,4 մլն ՀՀ դրամ, որից խմելու ջրի համակարգի արդիականացման համար՝ մոտ 98,7 մլն ՀՀ դրամ, իսկ ոռոգման ջրի համակարգի արդիականացման համար՝ մոտ 340,7 մլն ՀՀ դրամ:

2. Ոռոգման ջրի կորուստները մարզում կազմում են մոտ 50 տոկոս՝ համակարգերի մաշված լինելու պատճառով:

3. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով մարզում կառուցվում են միջհամայնքային ոռոգման ցանցեր, վերանորոգվում են խմելու ջրագծերը:

4. Մարզում նախատեսվում է կառուցել 6 ջրամբար:

5. Կառուցվող ջրամբարները կկրճատեն ջրային պաշարների կորուստները և կլուծեն ջրային ոլորտի խնդիրները:

6. Գետերի ցամաքելու պատճառներն ուղիղ կապված են կլիմայի փոփոխությունների հետ:

7. 2020 և 2022 թվականների պատերազմական գործողություններից հետո մարզի ջրային պաշարները փոփոխություններ չեն կրել:

6/5/2023

X *Gr. Grigoryan*

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Իրավաբանական բաժին  
Ն. Մաղաքյան, Հեռ. (0281) 2 55 95